

կուգայ կարկուտ Պարկտի մասունքը օդոյ յոր-
ձանապտոյտ ընթացքէն նետուելով ցուրտ հող-
մէն դէպ ի ջերմ հողմը կընդարձակի գոյորշեաց
մասնիկներով, որոնք զարձեալ մղուելով հողմե-
րէն և կիկտրականութենէն, կանցնին ցուրտ
կողմը և ցրտէն դէպի ջերմ, մինչև բաւական
մեծնալով և յաղթելով օդոյ դիմականութեան,
կրննին վար, Ասածիս ապացոյց է որ հիւսիսային
կողմերը, և Հասարակածին տակ ծովուն երեսին
բարձրութեամբ կարկուտ չգար, վասն զի հասա-
րակածրէն դէպ ի Բևեռ գնացած տաք հողմերը
կցրտանան մինչև որ հասնին այն տեղ, և անկէ
եկած ցուրտ հողմերը՝ մինչև հասնին ի հասարա-
կածիւ՝ կտաքնան, որով և չընին միմեջորտին
մէջ երկու հակառակ հողմեր՝ ցուրտ և տաք, որոնք
պատճառ են կարկտի, Ուստի կարկուտն կուգայ
բարեխառն գոտեաց տաք և գրեթէ միշտ ցերեկը
և հազիւ երբեք զիշերը՝ նոյն վերոյիշեալ պատ-
ճառին համար, Սոյն պատճառաւ ձմեռն ալ կար-
կուտ չգար, այլ ամառը:

(Ի յառաջագոյն)

Ե. Պ. ՄԿՐՏԻՉ Ս. ԴԱՅՅԱՃՆԱՆՆԵՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԶԱՐԴԱՍԷՐ ՄՕՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԴՈՒՍՏՐ.

Դուստր իմ հարազատ, ասաց մայրն աղջկան,
Ինչո՞ւ ես տխուր իրբն մի անբախտ
Պատմէ՛ դու քո մօր, որ լու՛ է յօժար,
Ի՞նչ ունիս պակաս, առա՛ որ առնեմ:

— Մայր իմ բարեգութ, ասէ իւր դստրիկն,
Ես չունիմ պակաս ոչ մի բաներից.
Ինձ չեն հարկաւոր զարդ ու զարդարանք,
Երբ միտքս է կարօտ զանազան ուսմանց:

Դստրիկ իմ չքնաղ համեստ սիրական,
Այդ ի՞նչ է մտացդ տարբեր զարդաւոր.
Պարկ տամ՝ չքեղ ազնիւ ջըմարդեատ,
Որով զարդարուիս ծաղկանց նմանակ:

— Սիրելի մայր իմ, չէ ինձ հարկաւոր,
Զուր է աշխատանքը մի՛ առնեմ այդ բանը.
Գնիր ինձ համար զրբեր զանազան,
Զարդարէ՛ միտքս միայն նրանցով:

Այդ ի՞նչ է դուստր իմ, այդ ի՞նչ ես խորհում
Մի՛թէ չգիտե՛ս զարդն է գովելի,
Մի՛թէ չե՛ս տեսնում բոլոր հայ աղջկունք,
Զանազան զարդեր ունին այժմ հագած:

— Սիրելի մայր իմ տեսնում եմ այտ
Բայց մի՛թէ չէ՞ք տեսնում նոցա շարժմունքները.
Զի նոցա մտքերը կարօտ են ուսմանց,
Անկիրթ աղջկանց ի՞նչ օգուտ զարդեր:

Ոչ, դուստր իմ սիրուն, սխալ է կարծիքդ,
Որ դու չես սիրում զարդ ու զարդարանք,
Որ լինիս ընկեր հարուստ աղջկերանց,
Պառնեմ քեզ ազնիւ բեհեղեայ շորեր:

— Ա՛յ, սիրելի մայր, միտքս է խաւարած,
Հատ ուսմունքների կարօտ եմ ես այժմ,
Զարդ չի հարկաւոր մի խաւար մտաց,
Թող ես չլինիմ զարդասէր աղջիկ:

Դուստր իմ, դու միակ գնծութիւն սրտիս,
Դոքա ի՞նչ օգուտ տխուր որտեղիս,
Այլ վշտացնեն զուարթուն դէմքեր,
Թառամեցնեն քեզ ծաղկի նման:

— Ա՛յ սիրելի մայր, չեն օգուտ խօսքերդ,
Եթէ ունենամ լուսոյ զաղաւար,
Եթէ սովորիմ կրօնի ուսմունք,
Պղծեցեցեանամ իրբն մի ծաղիկ:

Հաղբի որդեակդ իմ, հաղբի այդ շորեր,
Որով դու լինիս մի ծաղիկ զարնան,
Երեւի չքեղ դու նախանձիկ,
Ուրիշ աղջիկներ տեսնեն քեզ գովեն:

— Եթէ զարդարվի միտքս գիտութեամբ,
Պղծուարթանամ քեզ ծաղկանց նման,
Ապա թող գովեն զիս Հայ օրիորդք,
Բայց այժմ գովութեան ես չեմ արժանի:

Դուստր իմ սիրելի հոգեոյս իմ հատոր,
Քեզ չեն հարկաւոր անօգուտ ուսմունք,
Դու չես լինելու գիտուն աշխարհի
Քեզ պէտք է պճնիլ, զարդարուիլ սիրուն:

— Ո՛հ, սիրելի մայր իմ, ցաւում եմ սաստիկ,
Զարդն է լիշնամի մեր կանանց սեռին,
Մի՛թէ չէ՞ք տեսած պատկեր մօր Փրկչին,
Որ չունի մի զարդեր վերայ հագած:

Դուստր իմ աննման, զուր է քո խօսքեր,
Ո՞վ կայ աշխարհումս որ զարդ չըսիրէ,
Զարդ է գեղեցիկ մարդկային ազգի,
Դու չես լինելու կոյս ապաշխարող:

— Ո՛հ ապաշխարող, այլ ցանկամ գիտնալ,
Թէ ի՞նչ է արեն կամ ի՞նչ է լուսին,
Ի՞նչ են անհամառ աստղեր լուստփայլ,
Եւ ի՞նչ ձիւն, անձրեւ, կարկուտ, ցող, եղեամ:

Սիրելի ազգեկա, մի՛թէ չեն տեսնում այդ ամեն
աշխարհ:

Այդ ի՞նչ է՝ որ մարդ ցանկայ իմանալ,
Դու չես դառնալու գիտուն աստղաբաշխ,
Ի՞նչ օգուտ քննել անօգուտ բաներ:

— Մայր իմ, չեմ սիրում հագուստ թանկագին,
Որ չուտ է մաշվում իմ մարմնոյս վերայ,
Սիրում եմ ուսմունք զանազան տեսակի
Որ չունի երբէք հեանալ մաշվիլ:

Հագիւր սիրելի, թող հիննան մաշվին,
Պատրաստ եմ առնուլ ամեն ժամանակ,
Ահա առած եմ քեզ մի լաւ թիկնոց,
Որ քո ընկերներ չունին այնպէս բան:

— Ո՛հ երբէք մայր իմ, թող ես չունենամ,
Որ իմ ընկերներ ինձ գովեն ի զուր,
Թող ես սովորիմ ի՞նչ է ծով, ցամաք,
Եւ ի՞նչ կղզի, գետ, ի՞նչ է սար ու ձոր:

Դորս ի՞նչ օգուտ քո փափուկ մտացդ,
Դու չես դառնալու գիտուն ուսուցիչ,
Դու պէտք է լինիս մի կին ինձ նման,
Հարկաւ կունենաս հարուստ ամուսին:

— Ո՛հ, առաջ մայր իմ, կլինիմ գիտուն,
Որ գիտուններին ես ընկերանամ,
Ամեն ուսուցչաց լինիմ հաւասար,
Ուսեալ մայր դառնամ ապագայ որդեցոյ:

Այդ ի՞նչ է որդեակ, այդ ի՞նչ նոր խօսքեր,
Երբէք չեմ լսած այնպէս համարձակ,
Մի գուսար հարազատ տայ մօր պատասխան,
Այդ բոլորովին մտաց հակառակ:

— Մի՛թէ չտեսար մեր այն թատրոնու մը
Այն համեստաշարժ չքեղ օրիորդն,
Որ մարդկանց միջին կանգնած համարձակ,
Փայլումէր նորա մտաց ցլմունքներ:

Ես չեմ կամենում գովել այն ձնողքը,
Որ իւր աղջկերանց ռալիս են դարոց,
Անօգուտ ուսմանց լինել խեղճ գերի,
Մի՛թէ չե՞ս տեսնում մեր մօտ դրացին:

— Բայց շատ տղիդ է նորա խաւար միտքը,
Զի ես չունիմ կամք լինել զարդասեր,
Ես ցանկամ գիտնալ զանազան ուսմունք,
Թէ ի՞նչ են թուշունք անասունք երկրի:

Բաւ է որդեակդ իմ, հերիք դէմ խօսիս,
Այդ նոր նոր խօսքեր պահիւր քեզ համար,
Մի՛ տխրացներ քո մօր ուրախ սիրտը,
Որ դու ես միայն միսիթար սրտիս:

— Կը հնազանդիմ մայր իմ սիրելի,
Թիկնոցդ հագնելովս կատարեմ հրամանդ,
Բայց առ ինձ համար զանազան դրքեր,
Սրանցով փոքր ինչ միտքս էլ զարդարուի:

Այո որդեակդ իմ, հոգեոյս իմ հառոր,
Եւ ես կըզնեմ զանազան դրքեր,
Ապա սովորիս պէս պէս ուսմունքներ,
Ուսեալ մայր դառնաս ապագայ որդեցոյ:

— Ուրեմն ո՞վ մայր իմ, սիրեցիք այժմ ինձ
Դստրիկդ հարալատ՝ որ ձեզ կյարդէ
Զի լինիք պատճառ իմ երջանկութեանս՝
Կացուցանելով զիս ձեզ շնորհապարտ:

ՕՐ. ԱՇԽԷՆ ՓԼՓԱԶԵԱՆՅ.

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՇ. ՀԱՅՐԱՊԵՑ Ի Ս. ԷՋՄԻԱՏԻՆ.

Ի 25^ն ամսոյս Վ. հ. հափառ. և Որբազ-
նագոյն Հայրապետ ամենայն Հայոց Ի
Իւրականէ վերադարձաւ այսր Ի Ս. Լ. ջ-
միածին: